

## Արձանագրություն թիվ 8

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2019թ Ապրիլի 2-ին

Օրակարգը՝

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:

2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:

3. Ընթացիկ հարցեր:

1. Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղռչիկյան.

- Ներկայացնում այսօր մեր նիստում քննարկվող հարցերը: Գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 12-ը հետևաբար մեծամասնությունը ներկա է և կարող ենք սկսել խորհուրդը:

Ըստ օրակարգի պետք է լսենք ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ընթացքի մասին: Սակայն կարծումեմ հիմա չենք քննարկի, քանզի այդ հարցի մասին լսել ենք նախորդ նիստում և ավելի մանրամասն կքննարկենք հաջորդ նիստում:

2. Տ.Վ. Ղռչիկյան - Օրակարգի կարևորագույն հարցը՝ մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայումն է և հաստատումը: Խոսքը տրվում է մեթոդ խորհրդի նախագահ Կ.Ռ. Գրիգորյանին:

- Կ.Ռ. Գրիգորյան

Մեթոդ խորհրդի նախագահի ելույթը մագիստրոսական ծրագրի վերանայման և փոփոխությունների վերաբերյալ կցվում է.

“Քիմիա” և “Մննդի քիմիա և անվտանգություն” բաժինների մագիստրոսի կրթական ծրագիրը 120 կրեդիտ ուսումնական բեռնվածությունից 90 կրեդիտ ուսումնական բեռնվածության անցնելու առաջարկության մասին:

Հարցը նախօրոք քննարկվել է ֆակուլտետի մեթոդ խորհրդում և առաջարկվել է ուսումնական և հետազոտական կառուցամասերում կատարել փոփոխություններ՝ պահպանելով

կրեդիտների ծավալային հարաբերակցությունը ըստ կառուցամասերի: Առաջարկվել է նաև վերանայել և կատարել դասընթացների փոփոխություններ:

Այս հարցի հետ կապված անհրաժեշտություն է առաջացել վերանայել երկու մասնագիտությունների բակալավրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ժամային բաշխվածությունը: Առաջարկվել է առանց ընդհանուր ժամաքանակը փոխելու վերաբաշխել դասախոսությունների, գործնական պարապմունքների և լաբորատար աշխատանքների ժամաքանակը հետևյալ ձևով.

Սննդի քիմիա բաժնում

Ֆիզիկական քիմիա - 30/15/45

Օրգանական քիմիա – 45/0/60

Օրգանական քիմիա 2 - 45/0/45

Պոլիմերների քիմիա 45/0/60

Համապատասխանության գնահատում և որակի համակարգեր 45/30/30

Ալկոհոլային և ոչալկոհոլային խմիչքների արտադրական չափանիշները 28/28,

Քիմիա բաժնում

Օրգանական քիմիա 1 - 45/0/60

Օրգանական քիմիա 2 - 30/15/45

Ուսումնասիրման ֆիզ. մեթոդներ – 45/0/60

Օրգանական սինթեզ -45/0/30

Հետերոցիկլերի քիմիա 45/0/60

-Կ.Ռ.Գրիգորյան – Գործելու է միայն մեկ մագիստրոսական ծրագիր՝ “ քիմիա” մասնագիտացմամբ: Ուսուցման տևողությունը պետք է լինի 1.5 տարի: 1 տարի ուսումնառության և 0.5 տարի մագիստրոսական թեզի կատարման տարի: Այս ընթացքի լիովին բավարարը է, որպեսզի մագիստրոսը կատարի և գրական ակնարկի հասաքագրում և փորձարարական աշխատանքներ:

Մեթոդ խորհրդի նախագահին հարցեր ուղղեցին՝

Ռ.Պ.Մխիթարյան – իսկ վճարի ոլորտում փոփոխություն կա՞:

Կ.Ռ. Գրիգորյան- Վճարի չափը փոփոխվում է ըստ ուսումնառության տևողության:

Շ.Վարդանյան – Այս ծրագրում չի արտացոլվելու նեղ մասնագիտացման տարբերակը:

Կ.Ռ.Գրիգորյան – Ոչ: Ուսուցումը կատարվում է միայն մեկ ծրագրով, սակայն ուսումնառության ընթացքում և մասնավորապես վերջին կիսամյակում ուսանողը կարող է ընտրել այն ամբիոնը, որտեղ ցանկանում է կատարել թեզը:

Ա.Ս.Գալստյան – 1.5 տարի ուսումնառության դեպքում մագիստրոսը 6 ամիս պարապուրդ է ունենում մինչև ասպիրանտուրա դիմելը: Այդ դեպքում ինչ է անելու:

Կ.Ռ.Գրիգորյան - Այստեղ բացառվում է բանակի հարցը, այսինքն այդ ազատ ժամանակահատվածը ուսանողը կարող է շարունակել իր փորձարարական շրջանը և պատրաստվել ասպիրանտուրայի քննություններին:

Տ.Վ.Ղոչիկյան – Այժմ անցնում ենք քվեարկության: Ով՞ է կողմ մագիստրատուրայի 1.5 տևողության և միասնական մասնագիտացման ծրագրին:

Քվեարկությունը անցավ միաձայն (12 կողմ):

3. Տ.Վ.Ղոչիկյան – Ուզում եմ հիշեցնել, որ մենք ԵՊՀ-ի 100- ամյակի շրջանակներում իրականացնելու ենք սեմինար: Ամբիոնի վարիչները պետք է ամբիոններից ներկայացնեն թեմաները, զեկուցողներին: Այս հարցը պետք է քննարկվի առաջրկա ամբիոնի նիստերի ժամանակ և նեկայացվի գիտխորհուրդ: